

ՀՀԿԻՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻԵՎ ՍՊՈՐՏԻՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ



ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱՆ  
ՈՒՍՈՒՑԻԶՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ  
ԴԱՍԸՆԹԱՑ 2023

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Միջառարկայական կապերը՝ որպես սովորողների ուսուցումը և դաստիարակությունը խթանող միջոց

Կատարող՝ Լիլիթ Օհանյան

Առարկա՝ Հայոց լեզու և գրականություն

Ուսումնական հաստատություն՝ Հրազդանի Անանիա Շիրակացու անվան **N6** հիմն. դպրոց

ՀՐԱԶԴԱՆ 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն	- - - - -
- - - - -	2
Ա.Բակունցի <<Միքիալը>> պատմվածքը	- - - - - 3
<Զայնարկություն>> թեմայի ուսուցումը Կոմիտասի երգերի միջոցով	- - - 7
<<Որդիական երախտագիտություն>> ստեղծագործությունը	- - - - - 8
Եզրակացություն	- - - - -
- - -	11
Օգտագործված գրականության ցանկ	- - - - - 12

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ուսուցման ընթացքում կարևոր տեղ ունեն միջառարկայական կապերը, որոնք մեծապես օժանդակում են առարկայական գիտելիքների համակողմանի յուրացմանը: Միջառարկայական կապերի կարևորության մասին խոսել են հայտնի մանկավարժներ: Այսպես՝ Յ.Ա. Կոմենսկին իր «Մեծ դիպակտիկա» աշխատության մեջ նշում է, որ ուսումնական առարկաների փոխկապակցված ուսուցումը օգնում է բացահայտելու ուսումնասիրվող առարկաների և երևույթների միջև եղած կապերը:

Կոմենսկին համարում էր, որ միջառարկայական կապերին դիմելը «գիտություններից մեծ հարստություններ ձեռք բերելու» լավագույն միջոց է, և կարծում էր, որ այն ամենը, ինչը փոխադարձաբար կապված է, նույնպիսի կապի մեջ էլ պիտի դասավանդվի:

Իսկ շվեյցարացի մանկավարժ Ի.Հ. Պեստալոցին լուրջ վտանգ էր տեսնում առարկաները «տարանջատելու» մեջ:

Ռուս աշխնավոր մանկավարժ Կ.Դ. Ուշինսկին ևս մեծ կարևորություն էր տալիս միջառարկայական կապերին՝ դրանք համարելով արդյունավետ ուսուցման կարևորագույն նախապայմաններից:

Ամերիկացի փիլիսոփա, մանկավարժ Ջոն Դյուին առաջարկեց ուսուցման ընթացքում կիրառել համալիր թեմաներ՝ բացահայտելու տարբեր բնագավառների, տարբեր երևույթների միջև գոյություն ունեցող իրական կապերը, որոնք կօգնեն ընդլայնելու դպրոցականի մտաճարի գոտի և ձևավորելու ամբողջական աշխարհայացք:

Այս հետազոտության նպատակն է ներկայացնել դասավանդման մի շարք մեթոդներ, որոնք կօգնեն սովորողների մոտ ձևավորելու մշակութային գրագիտություն և գեղագիտական հաշակ, հետաքրքրություն առաջացնելու գրականության և արվեստի այլ ճյուղերի հանդեպ: Աշակերտների մոտ կզարգանա հետևյալ կարողությունները՝ Կարողանան բանավոր և գրավոր ձևերով հաճախել, ըմբռնել, արտահայտել, ստեղծել և մեկնավանել տարբեր փաստեր և կարծիքներ՝ օգտագործելով տարբեր առարկաներին և իրավիճակներին առնչվող տեսողական, ձայնային և թվային նյութեր:

Աշխատության մեջ նշված են այն խնդիրները, որոնք կօգնեն իրագործելու այդ նպատակը.

1.ԱՇակերտի մոտ զարգացնել ստեղծագործական նյութը ընկալելու և վերլուծելու կարողությունը

2.Զարգացնել գրավոր և բանավոր խոսքը

3.Արժևորել սեփական ինքնության գիտակցությունը՝ չկտրվելով մարդկային փոխհարաբերությունից և համաշխարհային մշակույթից:

4.ԱՇակերտներին սովորեցնել նյութը համակարգել, կատարել ստեղծագործական և հետազոտական աշխատանք, բանավիճել, համադրել և հակադրել երևույթները, եզրահանգումներ անել և տարբերել կարևորը երկրորդականից:

Այս խնդիրներն իրագործելու համար նշված են մի շարք ավանդական և ժամանակակից մեթոդներ՝

1.Շրջագայություն տեխնիկական բաժիններով

2.Կարծիքների շտեմարանի կազմում

3.Գուգադոքսյան աղյուսակ

4.Կրկնակի գրառումների աղյուսակ

5.Բանավեճ

6.Ֆրայերի մեթոդ

Այսպիսով՝ նշված մեթոդների կիրառումով կարելի է բացահայտել գրականության մեջ թաքնված գեղեցիկը, գտնել երեխայի հոգու նուրբ լարերի վրա ազդող միջոցները, սիրել տալ առարկան, բացահայտել խոսքի մեղեդայնությունը և գունագեղությունը, որոնցով էլ կապահովենք գրականության, երաժշտության և կերպարվեստի միջև եղած կապը:

Ա.Բակունցի <<Միքիավը>> պատմվածքը

Մեր օրերում, երբ մամուլն ու եթերը ողողված են գեղազիտական ցածր մակարդակի նյութերով ու երաժշտությամբ, կրկին ու կրկին կարևորվում է դպրոցի և ուսուցչի դերը սովորողների գեղագիտական հաշակի զարգացման գործում: Հատկապես գրականության դասաժամերը այդ հնարավորությունը տալիս են, որովհետև գրականությունը՝ իբրև արվեստի մի կարևոր նյութ, իր մեջ ներառում է արվեստի մյուս նյութերը, հատկապես երաժշտություն, թատրոն, նկարչություն, պար և այլն:

Գրականությունը, մասնավորապես պոեզիան չունեն հստակ ձևակերպումներ, կանոններ, որոնք կհետաքննեն այդ առարկայի ուսուցումը: Ամբողջ խնդիրը երեխայի հուզական աշխարհի վրա ներգործելն է:

<<Պոեզիա>> բառը հունարեն է և նշանակում է արարում, ստեղծում<sup>1</sup>: Բայց այն նաև նշանակում է միտք, հույզ, զգացմունք, սեր, կատարելության հասնելու կրքոտ ձգտում, մարդու սիրտը ազնվացնող ու հոգին մաքրագործող լուսավոր երգ:

Գարսիա Լորկայի դիպուկ բնորոշմամբ բոլոր իրերը գաղտնիք ունեն, իսկ պոեզիան բոլոր իրերի գաղտնիքն է: Արդյո՞ք բոլոր մարդիկ են ունակ բացահայտելու այդ գաղտնիքը և զգալու գեղեցիկը՝ ահա դժվարությունը:

<sup>1</sup>Վ.Դավթյան, Ի սկզբանե էր բանն, Հոգվածներ, Էսսեներ, Երևան, 1989, էջ 3:

Բացի դրանից՝ գիտության ու տեխնիկայի մեր դարում հնարավոր է երեխային ստիպել զիրք կարդալ: Սրանք բոլորը մերօրյա ուսուցիչների առջև ծառացած խնդիրներ են:

Այնուամենայնիվ, կյանքը միշտ կյանք է՝ իր հակատագրերով, սերերով ու կարոտներով:

Բնությունը միշտ կա՝ իր հարափոփոխ ձևերով: Եվ փանի դեռ կա այս ամենը, ուրեմն կա նաև դրանց հայելին՝ գրականությունը, և մեր խնդիրն է բացահայտել գրականության մեջ թափնված գեղեցիկը, գտնել երեխայի հոգու նուրբ լարերի վրա ագդող միջոցները և սիրել տալ առարկան:

Մենք ցանկանում ենք մի փանի միջոցների մասին խոսել, որոնք, մեր կարծիքով, կարող են նպաստել դրան:

Յուրաքանչյուր դասի հաջողություն պայմանավորված է մի շարք գործոններով՝ ուսուցչի նպատակով, ուսուցանվող նյութի բովանդակությամբ, դասարանի նախասիրություններով, աշակերտների գիտելիքների մակարդակով և այլն: Պետք է նշել, որ բնավ կարևոր չէ, թե որ մեթոդներով պետք է հասնել դասի արդյունավետության բարձրացմանը՝ ավանդակա՞ն, թե՞ ժամանակակից. կարևորը արդյունքն է:

Բերենք մի շարք օրինակներ, որոնք, մեր կարծիքով, արդյունավետ են եղել մեր գործունեության ընթացքում:

Անցնում ենք Ա. Բակունցի <<Միրիադը>> պատմվածքից մի հատված 6-րդ դասարանում: Տեխստը նկարագրական է, չունի սյուժե, ուրեմն պիտի գտնել այնպիսի միջոցներ, որոնք կօգնեն բնագրի բանաստեղծական բովանդակության բացահայտմանը:



Հատվածն աշունն մտաին է: Աշունանային բնանկարը կարդալիս ինչպե՞ս չցուցադրել որևէ նկարչի, ասենք Մ. Սարյանի կտավները, չհամադրել պատմվածքի գույները կտավի գույներին, որոնք մեր բնաշխարհի գույներն են. չէ՞ որ նկարը կօգնի բնագրի սեստիկական ընկալմանը: Իսկ եթե լսենք նաև Աշունն երգը, ապա հինչյունների օգնությամբ կապահովենք նաև հուզականությունը, որովհետև երաժշտությունը

ամենահուզական արվեստն է: Երեխաները քվարկում են այն ձայները, որոնք լսում են աշխարհի նկարագրության մեջ՝ տերևների շրջումը, տերևաթափի երգը, քամու սուլոցը, երիտասարդ կենսունիների խժոցը, սիմֆոնիայի տերևների պողպատահնչյուն ձայնը, աշխարհի տխուր մեղեդին: Այն,ինչ Սարյանը կարողացել է անել իր ներկայացման նուրբ երանգներով, Բակունցն անում է խոսքի, բառերի,պատկերների միջոցով, կարողանում է բառերի միջոցով ստեղծել լսողական և տեսողական պատրանք: Իգուր չէ,որ Ավ.Իսահակյանը Բակունցի գործերի մասին գրում է.<<Այնքան նուրբ են հյուսված, ասես հեփիաք են,կարծես երագ ես տեսնում>>:<sup>2</sup>

Իսկ ինչպե՞ս մղել աշակերտին դեպի այդ գեղեցկությունը: Կարելի է կիրառել տարբեր միջոցներ: Օր.՝

Առաջադրանքներ.

1.Մտովի պատկերացրո՛ւ, թե փայլում ես արահետով դեպի կապտավուն լեռները.նկարագրի՛ր երևակայածդ:

2.Ինչի՞ մասին կարող էր մտածել արևածաղիկը, որ ժպտում էր և օրորում դեղին գլուխը:

3.Ի՞նչ տրամադրություն է առաջացնում ձեր մեջ աշխարհի նկարագրությունը՝ սեր, կարոտ, տխրություն...Ինքնուրույն նկարագրել աշխարհ մի տեսարան:

Կան շարադրանքներ, որոնք պահանջում են մտքերի որոշակի հաջորդականություն, պատճառահետևանքային կապերի բացահայտում և այլն: Իսկ նկարագրական շարադրությունը ճկուն է, երբեմն պետք չէ մտքերի փարցած հաջորդականություն, մեծ է ստեղծագործելու հնարավորությունը, երեխան ազատ է իր երևակայության հետ: Բայց նա միայնակ կարող է գլուխ չհանել, ուստի պետք է նրան կողմնորոշել, օգնել: Այսպես՝

1.Հուշումներ անել և ուղղորդել.

Ա.Աշունը նկարիչ է:

Բ.Արևը երկնային դիցուհի է:

Գ.Սարերը հսկաներ են:

2.Գրատախտակին գրել բառեր և առաջարկել դրանք կիրառել փոխաբերական իմաստով՝ նկարել,օրորել,շփոթել,ժպտալ և այլն:

Օգնել, որ կազմեն համեմատություններ ,փոխաբերություններ, գտնեն ինքնատիպ մակդիրներ:

Կարողա՛ւ Ավ.Իսահակյանի խոսքը Ակ.Բակունցի մասին: Դիմելով Մ.Սարյանին՝ Իսահակյանն ասել է.<<Հայաստանում կա մի գրող,որի բառերը երգում են կոմիտասյան հանգով և փայլատակում ֆուկտիվների բոլոր գույներով:Այդ գրողը Ակսել Բակունցն է>><sup>3</sup>:

Հարց.

–Ձեր կարծիքով ո՞ր բառերը այս տեքստում կարող են<<երգել կոմիտասյան հանգով>>:

Կարելի է աշակերտներին հանձնարարել գրել մեկական նախադասություն աշխարհի մասին, ապա առանձին խմբերի առաջարկել տրամաբանորեն դասավորել մտքերը՝ստանալով կապակցված խոսք: Այդ ռազմավարությունը կօգնի, որ աշակերտն առնչվի ինչ–ի և ինչպես–ի հետ, կարողանա միտքը տրամաբանորեն զարգացնել,տալ նաև հնարավորություն որոշ փոփոխություններ կատարելու,երթե անհրաժեշտ է:

Եվ միշտ հետևել խոսքի պատկերավորությանը, որը ամենադժվարն է :

Իգուր չէ, որ բանաստեղծություն նշանակում է երգ, տաղ: Դեռ Գողթան երգիչների օրոք մեր նախնիները բանաստեղծությունները արտասանում էին փանդիլների նվագակցությամբ: Ապա եկան հոգևոր երգերը՝շարականները, որոնք նմանապես երգվում էին: Մեր էպոսը՝<<Սանառ ծոբը>>, ունեցել է շատ հատվածներ, որոնք մեր տաղանդաշատ ասացողները երգում էին և անգամ բեմադրում:

<sup>2</sup>Ավ.Իսահակյան, Երկեր, հատոր IV, Հայպետհրատ, Երևան, 1959, էջ175:

<sup>3</sup>Ա.Բակունց,Երկեր,Երևան,1986,էջ3:

Ավելի ուշ երգերը դարձան ուսմանս համար, վերածվեցին օպերաների, փոխակերպվեցին ժողովրդական երգերի։ Այսինքն՝ բանաստեղծությունն ունի ներքին երաժշտություն, որը մեր երգահանները հրաշալի հնչյունների միջոցով վերհանել են, և նենք հնարավորինս պետք է օգտվենք դրանցից՝ երեսաների մոտ բարձր արվեստի հանդեպ աննկատ սեր արթնացնելով։

### <<Ձայնարկություն>> թեմայի ուսուցումը Կոմիտասի երգերի միջոցով

Ուզում եմ նկարագրել, թե ինչպես ենք, օրինակ, ուսուցանում <<Ձայնարկություն>> թեման Կոմիտասի երգերի միջոցով։

Ինչպես գիտենք, ոչ ոք ժողովրդական երգերը այնպես լավ չէր ըմբռնում, ինչպես Կոմիտասը։ Միաժամանակ ոչ մի ստեղծագործություն այնքան հարուստ չէ ձայներով, կոչերով, մարդու զգացական ապրումներն արտահայտող բացականչություններով, որքան ժողովրդական խաղիկները, որոնց հրաշալի բանահավաքն էր Կոմիտասը։ Ահա թե ինչու այդ երգերի միջոցով այնքան հեշտ է զգալ մարդկանց հույզերը։ Եվ <<Ձայնարկություն>> թեման ուսուցանելով Կոմիտասի երգերի միջոցով՝ և՛ գեղագիտական հաշակ ենք զարգացնում, և՛ խոսքային միջավայրում ավելի ճիշտ ենք հասկանում դրանք։ Ահա, օրինակ, <<Խումար>> կատակ-պարերգը.<sup>4</sup>

Խումար պառկե երես բաց,

Հո՛ւպ, հո՛ւպ, հոպպըտա, դըմբա,

Դեղին կարպետ, բմբուլ բարձ,

Հոպ, հոպ, հոպպըտա, դըմբա։

Հե՛՛յ, հե՛՛յ, լավն է, հե՛՛յ, հե՛՛յ, լավն է,

Հե՛՛յ, հե՛՛յ, լավն է, հե՛՛յ, լավն է։

Երգի կատարումից հետո երեխաները գտնում են կոչական ձայնարկությունները և բացատրում, որ դրանք արտահայտում են կոչ, կանչ, խրախույս։

Կամ՝

Այ՛աղջիկ, ծամո՛ւ՛վ աղջիկ,<sup>5</sup>

Վա՛՛յ, ծամով աղջիկ,

Շափարից համով աղջիկ...

Ա՛՛յ, վա՛՛յ՝ կոչական և զգացական։

Ահա նաև <<Ձար, զընգը>> հրաշալի երգը՝ համեմված հետաքրքիր ձայնարկություններով.<sup>6</sup>

Ձար, զընգը, զար, զընգը թող զընգա,

Պարենք գիշեր լուսընկա,

Ձար, զընգը, զար, զընգը թող սընգա,

Էս գիշեր, լուսնակ գիշեր,

Ձար, զընգը, զար, զընգը թող զընգա,

Ձուն էկեր, գետին նախեր,

Ձար, զընգը, զար, զընգը թող զընգա։

<sup>4</sup> Կոմիտաս, Երկերի ժողովածու, հատոր II. Խմբերգեր, Երևան, 1965, էջ 69։

<sup>5</sup> Կոմիտաս, Երկերի ժողովածու, հատոր V, Մեներգեր և խմբերգեր, էջ 108։

<sup>6</sup> Կոմիտաս, Երկերի ժողովածու, հատոր III. Խմբերգեր, Երևան, 1969, էջ 47։

Հունկա գիշերվա կախարդանքը ավելի է հզորացնում պարը, որը հրաշալիորեն համադրված է նվագարանների զարկերին, այդ զարկերին համապատասխանող կանչերին, որոնք, անշուշտ, նմանաձայնական ձայնարկությունների հետաքրքիր օրինակներ են, իսկ <<գ>>բաղաձայնի կուտակումը ավելի է ընդգծում երգի մեղեդայնությունը: Եվ եթե մի պահ պատկերացնենք երգը առանց ձայնարկությունների, կտեսնենք՝ որքան անհույզ բան կստացվի:

Յուրաքանչյուր ուսուցիչ նորարար է. ամեն մի դաս անգամ նույն ուսուցչի մոտ տարբեր է նույնիսկ նույն թեմայի դեպքում: Որքան ինքն մարդն է, և ամեն մի դաս կրում է տվյալ ուսուցչի անհատականության կնիքը:

<<Որդիական երախտագիտություն>> ստեղծագործությունը

Ճ-րդ դասարանում մի թեմա կա՝ Լեոնարդո դա Վինչիի <<Որդիական երախտագիտություն>><sup>7</sup>: Ինչպե՞ս գտնել մատուցման հետաքրքիր ձև: Մյուս հարցում կարող է օգնության գալ կերպարվեստը, մասնավորապես գերմանացի նկարիչ Ալբրեխտ Դյուրերի <<Աղոթող ձեռքեր>> կտավը:



<sup>7</sup> Դ. Գյուրջյան, Թ. Ալեքսանյան, Ա. Գալստյան, Մայրենի 6, Երևան 2016, էջ 70:

<<Որդիական երախտագիտություն>> պատմվածքը ծեր ծնողներին օգնության հասած որդիների հոգատարության, ուշադրության և երախտագիտության մասին է: Տեսնելով ծնողների անօգնականությունը՝ հոպոպները անմիջապես իրար խնայ են տալիս, և ամեն մեկը մի ձևով սփոփում և ամոթում է նրանց, կյանքի կոչում և փորձում մի փոքր վարձահատույց լինել այն ամենի համար, ինչ արել են նրանք իրենց համար:

Թեման ավելի հասկանալի և դյուրամարս դարձնելու համար նախ կարդում ենք տեքստը, ապա կատարում շրջագայություն տեքստի բաժիններով, կատարում կարևոր մտքերի առանձնացում, կազմակերպում գաղափարների մտազրույց, կազմում կարծիքների շտեմարան:

Թեման ավելի հետաքրքիր մատուցելու համար զուգահեռներ ենք անցկացնում վերոհիշյալ նկարի հետ: Դա կարելի է անել խթանման փուլում: Նախ ցուցադրում ենք նկարը: Հետո պահանջում ենք, որ երեխաները բնութագրեն ձեռքերը, որոնք տեսնում են նկարում: Ապա մղում ենք ստեղծագործական որոնումների. ինչպիսի՞ն կլինի ըստ իրենց նկարի տերը, դեպի ո՞ր են ուղղված ձեռքերը, ինչու՞, ինչու՞ միայն ձեռքեր են նկարված, ինչպիսի՞ն են այդ ձեռքերը, ի՞նչ են պատմում դրանք տիրոջ մասին: Առաջերսները փորձում են կռահումներ անել. դրանով նրանց մղում ենք ստեղծագործական-որոնողական աշխատանքի: Եթե ուսուցիչը շտապում է իր կարծիքը մատուցել, երեխային գրկում է ինքնուրույն մտածելու ունակությունից, որովհետև երեխայի համար ուսուցչի կարծիքը միշտ ճիշտ է: Պետք է թույլ տալ, որ երեխան մտածի, զարգացնի իր գաղափարները, ձևակերպի դրանք, ներկայացնի իր կարծիքը, լսի այլ կարծիքներ, մտքեր փոխանակի, նոր կարողանա հանգել որոշակի եզրակացության և գիտելիքի իմաստավորման: Նոր միայն կարելի է ամփոփել այդ կարծիքները, ապա հաղորդել նոր տեղեկություններ:

Այս ամենը կազմակերպելուց հետո կարդում ենք նկարի ստեղծագործական պատմությունը.<sup>8</sup>

15-րդ դարում Գերմանիայում ապրում էր մի մեծ ընտանիք՝ 18 երեխայով: Հայրը չէր կարողանում հոգալ ընտանիքի հոգսը: Չնայած աղքատությանը՝ տղաներից 2-ը խիզախում են երագել. երկուսն էլ ուզում էին նկարիչ դառնալ: Երկար մտածելով՝ գտնում են ելք. նեսում են մետաղադրամ, և պարտվող զնում է հանձնում աշխատելու՝ պայմանով, որ ավարտելուց հետո պիտի ապահովեր մյուսի ուսման վարձը: Ալբրեխտը զնում է աշխատելու հանձնում, կատարում է տաժանակիր աշխատանք, իսկ մյուս եղբայրը՝ Ալբրեխտը, սովորում է ակադեմիայում, դառնում տաղանդավոր նկարիչ, վերադառնում է տուն և դիմում եղբորը.

– Եվ հիմա, Ալբրեխտ, իմ եղբայր, հասել է քո հերթը, իսկ ես հոգ կտանեմ քո մասին:

– Ո՛չ, եղբայրս, չափազանց ուշ է ինձ համար. իմ ձեռքերը էլ առաջվանը չեն: Ամեն մատու գոնե մեկ անգամ կոտրված է եղել. աջ ձեռքիս հոդացավն այնքան է սրացել, որ ես մեծ դժվարությամբ եմ կարողանում անգամ բաժակը պահել: Իմ մտներն այլևս չեն կարող նկարչի նուրբ աշխատանքն անել: Ո՛չ, չափազանց ուշ է ինձ համար:

Եվ երախտագետ Ալբրեխտը նկարում է եղբոր ձեռքերը: Քչերը գիտեն, թե դա ինչ է նշանակում հեղինակի համար: Դրանում՝ այդ կտավում, հեղինակի ցավն է, ավստոսանքը, փնտրանքը, միզուցե գոջումը, սերը, եղբոր գոհությունը գիտակցումը: Այդ ամենը նա անվանել է մի պարզ անունով՝ <<Ձեռքեր>>, իսկ մարդիկ այն անվանեցին <<Աղոթող ձեռքեր>>:

Կազմակերպում ենք ֆննարկում. նախ պետք է որոշել հերոսների արարքների դրդապատճառները, հետևանքները, ապա սահմանում ենք հիմնական գաղափարը, հիշում նմանօրինակ դեպքեր կյանքից, բնութագրում հերոսներին: Ուսուցիչը պետք է միշտ ակտիվ դերում լինի, օգնի, որ մտքերը ճիշտ ձևակերպեն, խթանում տարակարծությունը, բանավեճը, լրացնի առաջերսներին:

<sup>8</sup><https://www.iammedia.am/hy/post/Albrecht-Djurers-painting-Hands-the-touching-story>:




Այս պատմությունը իմանալուց հետո երեխաները արդեն կարող են կատարել համեմատություններ ,նշել նմանություններն ու տարբերությունները,մտորել,թե ո՞ր միջոցն է առավել խոստում՝ խո՞սքը, թե՞ նկարչական պատկերը:

Այդ անցում էմ կատարում կռադատման փուլին: Քանի որ գաղափարն արդեն ներմուծված է, կարելի է կազմել գուգադրության աղյուսակ, կատարել թուղցիկ գրառումներ, կազմել կարծիքների շտեմարան, թեման ամփոփել Ֆրայերի մեթոդով.<sup>9</sup>

## ՖԱՅԵՐԻ ՄՈՂԵԼ

Հական բնութագրեր	Թեմա	Ոչ Հական բնութագրեր
Օրինակներ		Անհամապատասխան օրինակներ

<sup>9</sup>Ա.Արևաուգյան, Իգ. Օհանովա, Գ.Յովհաննիսյան, Ա. Չոիրաբյան, Զ. Գրիգորյան, Մ. Դավթյան, Ձեռնարկուսուցիչներիհամար, Կառուցողականկրթությանհիմունքներըամեթոդները, Երևան, 2005, էջ 245



Առակերտներն ընդգրկվում են որոնողական-հետազոտական աշխատանքներում, մտածում են, գտնում օրինակներ, դասդասում համապատասխան բաժիններում, բնութագրում, տարբերում կարևորը անկարևորից, հակադրում ճիշտը սխալին, կատարում գուգոյություններ, հաստատում են կամ մերժում, այսինքն՝ հանգում հիմնական գաղափարի բացահայտմանը:

**ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

Այսպիսով՝ միջառարկայական կապերի միջոցով կարելի է հասնել նրան, որ սովորողը տարբեր ոլորտներից ձեռք բերած գիտելիքների հիման վրա կարողանա հանաչել, նկարագրել, համադրել, գնահատել և արժևորել երևույթները: Երեխաները կկարողանան արժևորել սեփական ինֆորմացիան, ձևավորել սեփական նախասիրություններ, կգարգացնեն իրենց գեղագիտական պատկերացումները՝ իրենց հոգևոր և նյութական ժառանգությունը դիտելով հայ և համաեթարհային մշակութային բազմազանության մեջ: Բոլոր դեպքերում ուսուցման գերնպատակը պետք է լինի ինֆորմացիայի մտածողության խթանումը և ուսուցչից ունեցած կախվածության հաղթահարումը: Հիշենք մեծ մտածողի խոսքերը. «Սովորողի գլուխը անոթ չէ, որ պետք է լցնել, այլ ջրի է, որ պիտի բոցավառել»:

#### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ա. Արևուզյան, Ի. Գ. Օհանյան, Գ. Հովհաննիսյան, Ա. Զոհրաբյան, Ք. Գրիգորյան, Մ. Դավթյան, Ջեռնարկ ուսուցիչների համար, Կառուցողական կրթության հիմունքները և մեթոդները, Երևան, 2005, 335 էջ
2. Ա. Բակունց, Երկեր, Երևան, 1986, 670 էջ
3. Դ. Գյուրջինյան, Թ. Ալեքսանյան, Ա. Գալստյան, Մայրենի, Երևան 2016, 239 էջ
4. Վ. Դավթյան, Ի սկզբանե էր բանն, Հոգիվածներ, էսսեներ, Երևան, 1989, 605 էջ
5. Ավ. Իսահակյան, Երկեր, Հատոր IV, Երևան 1959, 522 էջ
6. Կոմիտաս, Երկերի ժողովածու, Խմբերգեր, Հատոր II, Երևան, 1965, 279 էջ
7. Կոմիտաս, Երկերի ժողովածու, Խմբերգեր, Հատոր III, Երևան, 1969, 307 էջ
8. Կոմիտաս, Երկերի ժողովածու, Մեներգեր և Խմբերգեր, Հատոր V, Երևան, 1979, 210 էջ

